

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԳՐԻ ԳՈՐԾԱՆ ԱՄԱԼՅԱ ՎԱՅԱՆԻ

**ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄՆ ԱՐՑԱԽՅԱՆ
ՊՈՇԶԻԱՅՈՒՄ**

**Ժ. 01.02-«Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Արցախի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍԻ ՉԼԿՈՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
ՍԱՄՎԵԼ ՊԱՐԳԵՎԻ ՍՈՒՐԱՂՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու
ԱՐՔՄԵՆԻԿ ՉՐԱՅՐԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Խ. Աբովյանի անվան պետական
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. հոկտեմբերի 30-ին ժամը 14⁰⁰-ին՝ ՀՀ ԳԱԱ Մ.

Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՅ-ի Հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում: Հասցե՝ Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու
Ս.Ա.Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ազգային-ազատագրական մերօրյա պայքարն ինչ ընդգրկումներով ու խորությամբ է արտացոլվել հայ գրականության արցախյան թևը ներկայացնող գրողների չափածո գործերի մեջ, որոնք են գոյամարտի արցախյան պոեզիայի գաղափարական ու գեղարվեստական առանձնահատկությունները, ժամանակի ու երևույթների պատկերման բնորոշ կողմերը. ահա այս խնդիրների ուսումնասիրությանն է նվիրված ատենախոսությունը, ուր փորձ է արվում գիտական վերլուծությունների միջոցով գտնել առաջադրված հարցերի պատասխաններն ու հանգել ճշգրիտ եզրակացությունների:

Մեր աշխատանքում քննվում-լուսաբանվում են ինչպես նախորդ դարասկզբին (Գ. Ներսիսյան, Թ. Յուրյան), այնպես էլ հետագա տարիներին (Ա. Գրաշի, Բ. Ջանյան, Գ. Գաբրիելյան, Յր. Բեգլարյան, Վ. Հակոբյան, Յու. Սահակյան և այլն) գրական ասպարեզում անուն հանած բանաստեղծների այն ստեղծագործությունները, որոնցում հայոց ազատագրական պատերազմների գեղարվեստական մարմնավորման դասական ավանդները կիրառություն են գտել նորովի, թարմ ու ինքնատիպ գույներով: Ուսումնասիրության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում ազատամարտի արցախյան պոեզիայի ժանրային յուրահատկություններին, գրողների եզերքային բնավորություն ու կոլորիտ ներկայացնող գեղարվեստական միջոցներին ու լեզվամտածողությանը, երկրի ազատության ու անկախության համար մաքառող հայ զինվորի կերպարը ամբողջականացնող հատկանիշներին՝ մարդասիրությանը, խիզախությանը, վեհանձնությանն ու մարդկային բարձր արժանիքների դրսևորմանը, նույնիսկ՝ մարտական ամենածայրահեղ ու դրամատիկ պահերով հազեցած իրավիճակների մեջ:

Ատենախոսության մեջ, ամփոփ ձևով, անդրադարձել ենք ազերական բռնապետության ներքո արցախյան գրական կազմակերպության անցած դժվարին ուղուն, գրողների գրական, փիլիսոփայական, հասարակական-քաղաքական հայացքներին, գրականության կարևոր դերակատարությանը՝ ազգապահպանության գործում, փորձել ենք մեր դիտարկումներում ներկայացնել երևույթի թե՛ սոցիալ-մշակութային, գրական ու պատմական, թե՛ տնտեսական ու քաղաքական արմատները՝ ժամանակի ընդհանուր համապատկերում՝ մեր պատմության հարուստ դասերով հանդերձ:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ազգային-ազատագրական պայքարի արտացոլումն արցախյան պոեզիայում» թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ նրա գիտական ուսումնասիրությամբ ամբողջանում է ժամանակակից հայ քնարերգության թեմատիկ-գաղափարական և գեղարվեստական զարգացման միտումների ընդհանուր պատկերը:

Արցախյան պոեզիայում արծարծված ազգային հիմնախնդիրները մեր ժողովրդի համար ոչ մի ժամանակ չեն կորցնում իրենց հրատապությունը և նրանց բազմակողմանի հետազոտությունը՝ գեղարվեստական տարբեր

լուծումների ու ժանրային յուրահատկությունների մեջ, հնարավորություն է ընձեռում նորովի ընկալել երևույթները, առավել անսխալ լինել կողմնորոշումների ու գնահատումների մեջ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան ազգային-ազատագրական պայքարն արտացոլող արցախյան պոեզիան է, նպատակն ու խնդիրներն են՝ արցախյան պոեզիայի պարբերացումն ու համակարգումը, նրա գաղափարական ու գեղարվեստական առանձնահատկությունների, գրողների լեզվամտածողության, պատկերավորման միջոցների և, ընդհանրապես, պոետիկայի յուրահատկությունների վերլուծությունը՝ հայ քնարերգության զարգացման ընդհանուր պրոցեսի մեջ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿԿԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՐՈՒՅՐԸ

Ազգային-ազատագրական պայքարն արտացոլող արցախյան պոեզիան հայ գրականագիտության կողմից հանգամանորեն չի ուսումնասիրվել: Եղել են, իհարկե, առանձին հոդվածներ, անդրադարձներ, որոնցում Արցախում ստեղծվող գրականությունը դիտարկվել է համահայկական գրական դաշտի մեջ՝ մեկ միասնական հարթության վրա: Այսպես՝ ազատամարտի արցախյան պոեզիային իրենց գիտական հոդվածներում անդրադարձել են Ս. Սարիյանը, Ս. Արզումանյանը, Ս. Կապուտիկյանը, Ս. Խանզադյանը, Ս. Դանիելյանը, Ա. Չարությունյանը, Ս. Խանյանը, Ս. Չարությունյանը, Ա. Նիկողոսյանը, Ա. Ավանեսյանը, Վ. Չակոբյանը և ուրիշներ:

Գիտական աշխատանքի նորույթը՝ առաջին անգամ է հայոց ազգային-ազատագրական պայքարն արտացոլող արցախյան պոեզիան արժանանում համակողմանի ուսումնասիրության, ուր մենք փորձել ենք պարբերացման ու համակարգման ենթարկել քննության առարկա նյութը, վերհանել ազատամարտի արցախյան պոեզիայի գեղարվեստական ու գաղափարական առանձնահատկությունները, բնորոշ կողմերը, ցույց տալ նրա ուրույն տեղը ու դերը հայ գրականության մեջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության հետազոտական աշխատանքների հիմքն են կազմում վերլուծության, համեմատության, համադրումների ու պատմամշակութային մեթոդները: Ազատամարտի արցախյան պոեզիայի ուսումնասիրությունը՝ ժամանակի հուզող հարցերի և հիմնախնդիրների լայն ընդգրկումներով, հնարավորություն է ընձեռում առավել հստակ ներկայացնելու քննության առարկա գործերի նորարարական արժեքը, թարմն ու ինքնատիպը՝ ստեղծված կերպարների ընդհանուր համակարգում, գեղարվեստական նոր ձևերի ու բովանդակության արտահայտություններում:

Ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքում գրողների ստեղծագործություններն են, նրանց մասին առկա գրականագիտական նյութերը՝ հրապարակված պարբերական մամուլում ու առանձին գրքերով, ուսումնասիրությունները, մենագրական, ինչպես նաև գրողների կենսամատենագիտությունը ներկայացնող աշխատանքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունն ունի գաղափարական, ճանաչողական և դաստիարակչական նշանակություն, նրանում արծարծվող խնդիրների հրատապությունը բարձրացնում է աշխատանքի գործառնական դերը: Այն կարող է ուսումնական օժանդակ ձեռնարկ ծառայել բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողների ու դասախոսների, ուսուցիչների, ինչպես նաև ազատամարտի արցախյան պոեզիան ուսումնասիրողների, համապատասխան թեմայով բարձրագույն դասընթացներ կազմակերպողների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԸ

Ուսումնասիրության մեջ ընդգրկված հիմնական դրույթները հրապարակվել են գիտական տարբեր հանդեսներում, միջբուհական գիտաժողովներում ու առանձին գրքով:

Աշխատանքը քննարկվել է Արցախի պետական համալսարանի հայ գրականության և լրագրության ամբիոնի նիստում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության նպատակը, խնդիրները, արդիականությունը, նյութի մշակվածության աստիճանն ու գիտական նորույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՋԱՍԱՄԱՐՏԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Ինչպես հայտնի է, քսաներորդ դարի սկզբին Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղն անջատվեցին Հայաստանից և բռնակցվեցին Ադրբեջան կոչված հանրապետությանը: Դա, փաստորեն, գաղութացման մի քաղաքականություն էր, որը քողարկված էր ազգերի բարեկամության վերաբերյալ կոմունիստական կուսակցության ազգաձուլման գաղափարախոսությամբ: Նախիջևանը

որ օրի հայաթափվեց, իսկ Ղարաբաղը, հոգևոր-մշակութային կյանքի ու դանդաղորեն հասունացող ազատագրական տրամադրությունների ու պայքարի շնորհիվ, դիմադիր եղավ և պահպանեց իր ազգային դիմագիծը:

Պայքարի բովանդակությունը և ձևավորվեց ազատամարտի արցախյան պոեզիան, որի ակունքները սկիզբ են առնում անցյալ դարի 20-ական թվականներից: Այս տեսակետից բացառիկ նշանակություն ունի Գրիգոր Ներսիսյանի (1887-1937թթ.) գրական գործունեությունը: Նա միաժամանակ հանդիսացավ Լեռնային Ղարաբաղի գրական միավորման հիմնադիրը: Հայությունը, սակայն, Շուշիում գրողի հայրենի քաղաքում, ողջակիզվում էր, ինչպես սև գեհեռում: «Հեռու տարեք ինձ այս ավեր ու անմռունչ քաղաքից», -ասում է բանաստեղծը, քանզի անկարող է ականատես լինել «խելացնոր իր սիրո» հիշատակների «մոխրածածկ դիերի» փոշիացած բեկորներին: Այս բանաստեղծությունն, իրավամբ, կարելի է համարել հայոց եղեռնապատումի առաջին արձագանքներից մեկը: Իսկ իր «Ամբաստանագիր» բանաստեղծությունում Ներսիսյանը դիմում է աշխարհի դատավորներին, որոնք սոսկ «օրենքի, ձևականության ծառաներն են» և «շուքով դատում են» գողություն, բռնաբարություն և այլ զանցանքներ, մինչդեռ պարտավոր են առաջին հերթին դատելու եղեռնի նենգ, խարդախ դևերին, որոնք մոխրակույտի են վերածել քաղաքը և «օրհնեթգել ու երկմել են զագիր այս արյունի ծովը»: Սակայն հայրենի քաղաքի ավերակները չեն կասեցնում բանաստեղծի ձգտումները երկրամասի մտավոր կյանքի նորոգության ուղղությամբ: Հայրենիքը և հայրենասիրությունը դառնում են նրա ստեղծագործության գլխավոր մոտիվը: Այս տեսակետից ուշագրավ է Ներսիսյանի «Վերադարձ» պոեմը, ուր հայոց պատմական Արցախը, թև օտարված, բայց որպես մասունք սրբագործվում է ազգային հոգեբանության մեջ:

Գրիգոր Ներսիսյանի տաղանդի փայլն ու ազգային ոգու նվիրումները չէին կարող չշարժել անկիրթ ու գռեհիկ տիրապետողի քենն ու նախանձը. նացիոնալիզմի ու հակակուսակցական օպոզիցիաներին հարելու մեղադրանքով նրան աքսորեցին Սիբիր: Նույն ճակատագիրն էր վիճակվելու նաև Արցախի գրողների բաժանմունքում նրա գործը շարունակողին՝ տաղանդավոր բանաստեղծ, «ներքին աքսորյալ» Թաթուլ Հուրյանին (1912-1942), եթե նա չզոհվեր Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատում: Ասում ենք՝ նույն ճակատագիրը, քանզի արդեն նրան նույնպես հետապնդում էր ազգայնականության պիտակը: Թ. Հուրյանն իր առաջին ստեղծագործություններով հասցրել էր արդեն արժանանալ մեծն Չարենցի ուշադրությանն ու հովանավորությանը: Երիտասարդ բանաստեղծի հուշերում հայոց պատմությունը ներկայանում է թշվառության էջերով, մեր հայրենիքը բանտի է նման, «իսկ մենք՝ գերիներ, խեղճ, վտարանդի», մեր բազուկներին շղթա է դրված, մեր լեզվի վրա՝ փականքներ, «մինչև երբ մնանք օտարի գերին», մինչև երբ կրենք օտարի լուծը: Այլ ելք չկա, քան դիմադիր կամքը և պայքարի ոգին:

«Արցախյան գրականությունը ստեղծվել է դժվար, անասելի դժվար պայմաններում և նվիրյալ գրական մարդկանց ազնիվ ջանքերով ու զոհողություններով... որովհետև նրանցից առաջիններն, իրոք, զոհվել, զոհ են դարձել

խարդավանքներին, որոնց մշտական հեղինակները թուրք-ազերիներն են»¹, - իր հուշերում գրում է Բոզդան Ջանյանը և ակնարկում, թե «ղարաբաղյան գրողների բաժանմունքն» աղբբեջանական օրգանների համար միջոց է եղել «նացիոնալիստներ որսալու համար»:

Դառը ճակատագրից չկարողացավ խուսափել նաև անվանի բանաստեղծ Բոզդան Ջանյանը (1917-2007թթ.): «Բոզդան Ջանյանը,- բնութագրում են Յրաչյա Բեգլարյանը և Վարդան Յակոբյանը,- Արցախի գրական օջախի նահապետն է, այն գրողներից մեկը, որի ջանքերով 40-ականներին դժվարությամբ վերականգնվեց 37-ի դառնությունները լիովին «վայելած» Ղարաբաղի գրողների միությունը»²: Յայրենական պատերազմից հաղթանակով վերադարձած բանաստեղծ Ջանյանը կարգավորում է գրողների միության մարզային բաժանմունքի ձևավորման ընթացքը, սակայն 1948-ին նա նույնպես նացիոնալիզմի մեղադրանքով արստրվում է Սիբիր: 1954-ին, վերադառնալով արստրից, Ջանյանը կրկին ակտիվորեն մասնակցում է մարզի մտավոր-գրական կյանքի տեղաշարժերին: Օրերի հետ ավելի ու ավելի են սաստկանում աղբբեջանական գաղութատիրական ճնշումներն ինքնավար մարզի հայկական ոգու արթնացումների դեմ՝ բռնության ու հալածանքի մթնոլորտ ստեղծելով հայրենասեր մտավորականների շուրջ: Ջանյանն ազերական իշխանությունների կողմից վտարվում է հայրենի Արցախից: Պիտի ընգծել, որ նա իր բանաստեղծությամբ կազմավորեց հայրենի եզերքի հոգևոր աշխարհագրությունը՝ բացահայտելով նրա ինքնության արժեքները:

Ազատության գաղափարն անբաժանելի է հայրենի օջախի և ազգային ինքնության գիտակցությունից: Առավելապես այս տեսակետից է գնահատելի Ջանյանի պոետական ընդվզումը: Եվ հատկանշական է, որ հայրենիքի խորհրդանիշներից նա հատկապես նախասիրում է անտառը, քանզի անտառը հավերժական է, առասպելական ու անպարտելի: Անտառը ճանապարհ է, արահետ, բնության իմաստուն արարողություն, կյանք է, շարժում և հավերժական նորոգություն: Բանաստեղծը սուզվում է անտառի լռության մեջ, և լռությունը նրան հեքիաթ է պատմում կյանքի ու գոյի մասին: Ջանյանի պոետիանում հայրենի եզերքն առավելապես ներկայանում է հուշերի մեջ, և այդ վերհուշերում թանձրամած մի թախիծ կա, որ նույնիսկ անփարատ է մնում հաղթանակից հետո: Վերայցելությունը հայրենի բնօրրան նույնպես թաթախվում է թախծի մշուշով, որովհետև անորոշ է մնում Արցախի ճակատագիրը դարավոր թշնամու ոխակալ ձգտումների օղակում:

Ազգային տրամադրությունների ու զարթոնքի մթնոլորտում ձևավորվեց բանաստեղծ Աշոտ Գրաշին (1910-1973թթ.), ով գեղարվեստական պատկերավորություն տվեց Ղարաբաղյան թեմատիկ ուղղությանը՝ հայ պոետիայի պատմության մեջ: Նա ձև տվեց նոստալգիկ հայրենասիրության պոետիկային՝ ապրումների մեջ ուրվագծելով հայրենի բնաշխարհի հմայքն ու կարտոն: Գրաշու հայրենի եզերքը ինքնաբավ է, անկախ՝ միջավայրի օտարաշունչ ազ-

¹ Ջանյան Բ., Դեռացած հեռուներ, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» իրատարակչություն, 2007, էջ 3:

² Նույն տեղում, էջ 7:

դեցություններից: Այդ հանգամանքը, նույնիսկ, կարծես գոյություն չունի: Գիշտ է, հայրենին հեռու է, բայց նրա պատկերը բանաստեղծի հոգու մեջ է մտերիմ ու ջերմ գորովանքի գրավչությամբ: Նա ազատ ու հավերժական է, քանզի նրա ձևույթը տիեզերական է: Գրաշու «Կապույտ լեռներում» շարքը ներթողների մատյան է, հայրենասիրության իսկական մատյան, որը ներխուսված է բանաստեղծի անմնացորդ սիրով առ հայրենին, քանզի ինքը ծուլված է հայրենի հողից ու ջրից («Ես քո հողից եմ բուսել, Ղարաբաղ»), և նրա մարմինն ու հոգին բաղադրված են հավերժորեն հպարտ լեռնաշխարհից ու արևաթաթախ հովիտներից: Յենց այս սիրո մեջ է Գրաշու ընդվզումն օտարի տիրապետության հանդեպ, քանի որ երկիր հայրենին իրենն է, և այդպես կարելի է սիրել միայն իր պատկան երկիրը և այստեղ միայն կարելի է գտնել իր վերջին հանգրվանը: Յիրավի, Գրաշու «Կապույտ լեռներում» շարքը կարելի է համարել հայոց արցախապատումի բանաստեղծական ամենամալայուն էջերից մեկը:

«Անհատի պաշտամունքի» քննադատությունից հետո, խրուչշկյան շրջանում, նկատելիորեն ակտիվանում է ազգային շարժումը Ղարաբաղում: Գրողների միությունը՝ Բագրատ Ուլուբաբյանի ղեկավարությամբ, դառնում է յուրատեսակ կենտրոն՝ ազգային շարժումը գաղափարապես կազմավորելու գործում: Այս հանգամանքը չէր կարող աննկատ մնալ աղբյուրանաթուրքական գաղութարարների ուշադրությունից: Սկիզբ է առնում հակահայկական ռեակցիոն արշավ մարզի մտավորականության դեմ, որն ավելի բացահայտ հակաժանքի է հասնում՝ բորբոքելով, բնականաբար, Արցախի հայության մեջ ազատագրական պայքարի հուրը: Չնավորման նոր փուլ է մտնում ազատամարտի արցախյան պոեզիան, որի առաջատար դեմքերից են Գուրգեն Գաբրիելյանը, Յրաչյա Բեգլարյանը, Վարդան Յակոբյանը:

Ժամանակակից մանկագրության տաղանդավոր դեմքերից է Գուրգեն Գաբրիելյանը: Արցախյան բանաստեղծության արժեքավոր էջերից է նրա մանկական պոեզիան, որը իսկական դպրոց է մանուկ սերնդի դաստիարակության, աշխարհիմացության և մտավոր կազմավորման գործում: Այս տեսակետից հատկապես արժեքավոր են գրողի «Այբուբենը երգերի մեջ», «Ընտիր երկեր», «Երգող ծառը» ժողովածուները, որոնք մանուկներին ուսուցանում են մայրենի լեզու, հայրենասիրություն, արցախյան բնաշխարհի ճանաչողություն և սեր՝ հայրենի օջախի և ազգային ավանդույթների հանդեպ:

Արցախյան բանահյուսության պսակը կարելի է համարել Գուրգեն Գաբրիելյանի «Յրոկվելը», որտեղ արտացոլված է հայ գեղջուկի անսահման սերը հողի հանդեպ, աշխատանքի, վաստակի, պարզ ու աստվածահաճու կենցաղավարության փիլիսոփայական խոհը: Միայն բնիկ ժողովուրդը կարող է ունենալ աղոթքի պես մաքուր հոգևոր երգ:

Արցախյան պոեզիայի առաջընթացում նշանակալից եղավ Վարդան Յակոբյանի ներկայությունը՝ թե՛ իբրև բանաստեղծ, թե՛ որպես գրական, հասարակական գործիչ: Նրա պոեզիայի ժամանակը համընկնում է կերպովան տարիների քաղաքական ռեակցիայի մղձավանջին, և միանգամայն ակներև է բանաստեղծի ներքին օպոզիցիան՝ մարզը սեփականացնելու ալիկյան ծրագրի դեմ: Բանաստեղծի յուրաքանչյուր բառ ունի ապրումների, զգացումների, փիլիսոփայական ընդհանրացումների անսահմանություն, որը և նրա խոսքը

դարձնում է դինամիկ: Նրա բանաստեղծություններում բառն իսկապես «շատ բարդ և բազմակողմանի մի երևույթ է»³, -ինչպես ասում են: Վարդան Զակոբյանի պոեզիան մաքառման պոեզիա է, մաքառում հանուն հայրենի Արցախի ինքնության ու ազգային գոյության, պատմության ու պայծառ ապագայի:

Դիմատրական շարժման առաջատար դեմքերից է Զրաշյա Բեգլարյանը: Իզուր չէ նա իր երկերի հատորները անվանել «Արցախ-Նամե», որովհետև նրա ամբողջ ստեղծագործությունն ասք ու պոեմ է Արցախի մասին: Բեգլարյանի բանաստեղծությունների առաջին իսկ ժողովածուներում («Կամուրջ», «Լեռան աղբյուր», «Կապույտ լեռների երգը») հայրենի Արցախ բնաշխարհն է, նրա պատմությունն ու հոգևոր հանճարի հուշարձանները:

Մի առանձնահատկությամբ Բեգլարյանի պոեզիան կարծես լրացնում է արցախյան բանաստեղծության ներաշխարհը: Դա բացահայտ ու անմնացորդ զգացմունքայնությունն է, սերը՝ որպես հոգեկան վիճակ՝ շնորհված հայրենի բնաշխարհի վկաներին, ասելիքի պարզությունը: «Արվեստների արվեստը, գեղարվեստական ձևի բարձրագույն պոժանիքը,-գրել է Ու. Ուիթմենը,-գրականության արևը պարզությունն է»⁴: Զրաշյա Բեգլարյանի պոեզիայում այն, ինչ դարաբաղյան է, սիրելի է ու պաշտամունքի առարկա, կարծես սերը և կարոտը տրված են լեռների, առուների, հովիտների, արահետների բնական պարզության ու եռությամբ. «Այս ծաղկահոտ սարերից, կանաչ նարոտ սարերից կարոտս չի հազե՞նում»⁵: Այս սերը յուրատեսակ վահան է հայրենիքի ինքնությունը պահպանելու համար, զգացմունքի մի հայրենասիրություն, որ չի թաքցնում ներքին ցասումը վայրագ թշնամու հանդեպ:

Ազատամարտի պոեզիան բարդ համակարգ է ներկայացնում՝ և՛ կառուցվածքային, և՛ բովանդակային իմաստով: Լինելով համազգային երևույթ՝ այն միաժամանակ համաշխարհային արձագանք ունի և եմբակա է ոչ միայն ազգային-գաղափարական, այլև սոցիալական, հոգեբանական, բարոյաբանական չափանիշների: Դա էապես աշխարհայացք է, փիլիսոփայություն, հայացքների վերստուգում:

Ազգային շարժման բարձրակետը 1988 թվականի փետրվարն է: Շարժումը ղեկավարում էր «Կռունկ» կոմիտեն (նախագահ՝ Արկադի Մանուչարով, փոխնախագահ՝ Վարդան Զակոբյան): Ապա հաջորդում են Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի ցեղասպան դեպքերը... Ժամանակի զարգացող իրադարձությունների ու դեպքերի ընդհանուր համապատկերում առավել հստակությամբ է ներկայացվում ազգային-ազատագրական պայքարի բովում հասունացող արցախյան պոեզիայի պատմական ուրվագիծը: Պոեզիա, որը շարունակում է իր պայքարը գոյամարտի բոլոր դիրքերում՝ մեկ անգամ ևս

³ Բախտին Մ., Դոստոևսկու պոետիկայի հիմնախնդիրները, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատարակչություն, 2010, էջ 171:

⁴ Ուիթմեն Ու., Խոսի տերևները, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2012, էջ 11:

⁵ Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2000, էջ 47:

հաստատելով այն ճշմարտությունը, որ, իսկապես, նույն արճիճից են ծուլվում «գնդակն ու...տառը»⁶:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԸ

Ազատագրական պայքարի ու պատերազմի թեման, ընդհանրապես, լայն տեղ ունի ինչպես հայ, այնպես էլ ռուս և համաշխարհային գրականության մեջ: Ազատամարտի պոեզիան, դաստիարակչական նշանակությունից բացի, ունի նաև ժողովուրդների ազատության ու անկախության համար պայքարի պատմությունն ու գեղարվեստական տարեգրությունը ներկայացնելու առաքելություն:

Արցախի ազատագրական շարժումն իր բովանդակությամբ համազգային էր, և, բնականաբար, այն իր արտացոլումը գտավ հայ գրականության, հրապարակախոսության և բանաստեղծության մեջ: Իրենց ստեղծագործությամբ շարժմանն արձագանքեցին Սիլվա Կապուտիկյանը, Վահագն Դավթյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Հովհաննես Գրիգորյանը, Դավիթ Հովհաննեսը և շատ ուրիշներ: Արցախի բանաստեղծությունը մասնակից եղավ ազատագրական շարժման իրադարձություններին: Պետք է ասել, որ ասպարեզի վրա էին, առանց բացառության, Արցախի բոլոր գրողները:

1988 թ. հունվարին բանաստեղծ Վարդան Հակոբյանը Գուրգեն Գաբրիելյանի, Հրաչյա Բեգլարյանի և այլ մտավորականների հետ վերջնական տեսքի է բերում ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ս.Ս. Գորբաչովին ուղղված այն նամակը, որով պահանջվում էր Արցախը վերամիավորել Հայաստանին: Մոսկվայում այն հայտնի դարձավ «23-ի նամակ» անունով, որովհետև նամակի տակ ստորագրել էին քսաներեք մտավորականներ: Որպես բանազնացներ՝ Մոսկվա մեկնեցին Վ.Հակոբյանը, Գ. Գաբրիելյանը, Հ. Բեգլարյանը և ուրիշներ: Մոսկվայից վերադառնալուն պես նրանք Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում ժողովրդի առջև հանդես եկան՝ հնչեցնելով մինչև վերջ պայքարելու կոչը:

Գրող Վարդան Հակոբյանը, ով ազատագրական պայքարը ղեկավարող գործիչներից մեկն է, այդ թեժ օրերին ցած չդրեց գրիչը՝ ստեղծելով մարտաշունչ երգեր, պոեմներ, բալլադներ և այլ գործեր: Կարևորելով գրողի դերն ու առաքելությունը՝ բանաստեղծը գրել է. «Մեր յուրաքանչյուր տող պիտի գնա այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ հոսում է մեր հողի համար ընկած զինվորի արյունը»:⁷ Չափազանց բեղմնավոր գործունեություն ծավալեց Վ. Հակոբյանը շարժման և պատերազմական տարիներին: Իրար հետևից տպագրվեցին նրա «Ամարասի գանգերը»

⁶ Էմին Գ., Երկերի ժողովածու, հատոր 2, Երևան, «Սովետական գրող» իրատարակչություն, 1985, էջ 93:

⁷ Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ե, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» իրատարակչություն, 2008, էջ 547

(1989թ.), «Արցախյան ծուխ» (1989թ.), «Մեսրոպ Մաշտոցն Ամարասուն» (1990թ.), «Տաճարն Աստօծ» (1991թ.), «Սոսե» (1994թ.), «Մենարան» (1996թ.) և այլ գրքեր:

Գրող-հրապարակախոս, Արցախի հերոս Զորի Բալայանը, բարձր գնահատելով Վ. Հակոբյանի տեղն ու դերը Արցախյան շարժման տարիներին, գրում է. «Մեր նորագույն պատմությունն ու արցախյան համազգային շարժումը դժվար է պատկերացնել առանց Վարդան Հակոբյանի: Դժվար է պատկերացնել և մեր պոեզիան առանց մարտնչող պոետ Վարդան Հակոբյանի: Այնպես են դասավորվել իմ ճակատագիրն ու կյանքը, որ ես մշտապես եղել եմ կամ մասնակիցը, կամ ականատեսը մեր ազգային գոյամարտի բոլոր կարևորագույն ու ճակատագրական անցուդարձերի: Եվ կարող եմ վստահորեն ասել, որ ամենածանր ու դժվարին ճամապարհների գրեթե բոլոր խաչմերուկներում հանդիպել եմ Վարդանին՝ լինի դա մեր ողբերգաշունչ նկուղներում (այս մասին Վարդանը պիես է գրել՝ «Արցախյան բալլադ»), լինի դա հոսպիտալում, որտեղ բուժվում էին հերոսները, թե այլուր»⁸:

Վարդան Հակոբյանը «Սոսե» ժողովածուի մեջ դիմում է գեղարվեստական հետաքրքիր հնարանքի՝ վերակենդանացնելով ու ժամանակակից իրականությունն քերելով մեր ժողովրդի ազատության ու անկախության համար նահատակված հերոսներին, նրանց մասնակից դարձնում ազատագրական պայքարի նոր ծավալումներին: Մոնթեի, Ավոյի, Աշոտի և մյուս երևելի ազատամարտիկների կողքին՝ զենքը ձեռքներին, կռվում են և՛ Անդրանիկ Զորավարը, և՛ Նժդեհը, և՛ Աղբյուր Սերոբը, և՛ Սոսեն...Եվ համազգային այս միասնականությունը, երբ անմահ զոհերն անգամ հողից ելնում, կռվի դաշտ են մտնում հայրենիքի համար ճակատագրական պահին, հայոց քաջերին դարձնում է անպարտելի: Եվ գրողն այդ ամենին հասնում է բազմապիսի պատկերների, գրական-գեղարվեստական հնարանքների միջոցով՝ հաճախ միֆիկան զգեստների մեջ ներկայացնելով իր հողի ազատության համար պատերազմող հայ շինականին: Արցախյան ազատամարտի բնորոշ գծերից մեկն էլ այն է, ըստ գրողի, որ այստեղ կողք կողքի են և՛ Ավարայրի, և՛ Սարդարապատի հայոց բանակները:

Գեղարվեստական նուրբ ու համոզիչ հնարանքներով բանաստեղծն ամբողջական մի պատկեր է ստեղծում «Վարդանանց բլուր»-ում, որը, կարելի է ասել, նորարարական շունչ ու ոգի է բերում՝ մտքի ու մտածողության նոր ոգով ու իմաստասիրական ինքնատիպ լուծումներով: Բանաստեղծության համար հեղինակը հետաքրքիր բնաբան է ընտրել, որը և առաջին իսկ տողերից հիշեցնում է ստեղծագործության թեմատիկ ուղղվածության մասին. «Արցախյան մի զորամաս կռվել է Ավարայրում և վերադարձին հերոսաբար նահատակվել եղեգնածորում: Հերոսների աճյուններն ամփոփող բլուրը հիմա կոչվում է Վարդանանց բլուր»: Այդ գործն ստեղծելիս հեղինակին, ինչպես ասում են, նյութ է տվել նաև Վարդանանց բլրի հետ կապված այն ժողովրդական լեգենդը, ըստ որի մի մեծամայր ամեն օրվա իրիկնադեմին

⁸ «Եղիցի լույս», 2008, N 5, էջ 3:

մոտ՝ սպիտակ քողերի մեջ, աննկատելի մոտենում է Վարդանանց բլրի վրա ամփոփված շիրիմներին և նրանց վրա իր համբույրը թողնում: Եվ իրականն ու տեսլականը բանաստեղծի մտապատկերների մեջ միաձուլվում են՝ ծնունդ տալով մի գեղեցիկ ստեղծագործության, որը, հիրավի, կարելի է համարել արդի մեր քնարերգության այդ թեմայով գրված լավագույն նմուշներից մեկը:

Արցախյան շարժման վերջին երկու փուլերում էլ (60-ական և 80-ական թվականներ) բանաստեղծ, երգահան Գուրգեն Գաբրիելյանն իր գրչընկերների հետ իրադարձությունների կիզակետում էր: Նա ոգեշնչում էր ժողովրդին հայրենասիրական երգերով, որոնցում Արցախի լեռներն ու գետերը, վանքերն ու հուշարձանները լեզու առած, պատմում են մեր հերոսական անցյալի մասին: Հայրենի եզերքը Գ. Գաբրիելյանը ոչ թե ներկայացնում է սոսկ իբրև գեղատեսիլ մի վայր, այլ որպես հերոսների օրրամ: Ակադեմիկոս Ս. Սարիյանը Գաբրիելյանի մասին գրել է. «Ինձ մեծ հաճույք է պատճառում նրա բանաստեղծությունը: Իսկ «Ղարաբաղի հորովելը» ինքն է՝ որպես բանահյուսություն»⁹... Գուրգեն Գաբրիելյանի մտածողությունը ժողովրդական է: Եվ ազատամարտի թեմայի նկատմամբ նրա մոտեցումներն էլ առանձնանում են իրենց բնորոշ կողմերով, ասել է թե՛ ցանկացած թեմայի մեջ նա գտնում է իր՝ գաբրիելյանական ասելիքը՝ այն տարրալուծելով ազգային բանահյուսության մեջ: Ընդգծենք, որ գեղրավեստական այս հատկանիշը Գուրգեն Գաբրիելյանի ստեղծագործության ամենաբնորոշ առանձնահատկությունն է: Գուրգեն Գաբրիելյանի յուրաքանչյուր բանաստեղծության մեջ ներքին, անհաշտ կռիվ կա: Պատերազմական թեման նոր ու ինքնատիպ արտացոլում է գտնում անվանի մանկագրի ստեղծագործություններում՝ թարմություն հաղորդելով նրա խոհին, մտքին, պատկերավության միջոցներին ու փիլիսոփայական ընդհանրացումներին:

Իհարկե, քանի որ բանաստեղծի էությունը շաղախված էր ամբողջովին Արցախով, չէր կարող նրա ցանկացած երգի ու պատկերի մեջ չարտահայտվել այն անբավականությունը, ըմբոստությունն ու ներքին պայքարի ոգին, որ մշտական հակասության մեջ էին իշխող կարգերի հետ: Հիշենք, թերևս, խորհրդային «ամենախաղաղ» տարիներին գրած նրա «Արցախյան շարական» բանաստեղծությունը, ուր Արցախ աշխարհը ներկայանում է որպես «բիբլիական հնություն» ու «նորություն նորօրյա», «Ջրհեղեղված...խորություն», նահատակված պապերի «արյունահունց ամնահություն», «հորովելված ավանդություն»: Գեղարվեստական այս պատկերներում ազգային բնավորության ու ճակատագրի շեշտված գծեր կան, որ գաբրիելյանական ոճի կիրառության մեջ ապահովում են քնարական խոսքի նոր որակ: «Բանաստեղծի յուրաքանչյուր բառ,-գրում է գրականագետ Վ.Հակոբյանը,-պետք է իր մեջ կրի բոլոր այն հատկանիշները, որ հատուկ են հեղինակին, այլապես տողը տող չի լինի, պատկերը՝ պատկեր»:

⁹ Գուրգեն Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2007, էջ 359:

Գաբրիելյանը բնավորություն է «տեղադրում» անգամ ենթատեքստի մեջ՝ ժամանակի գրաքննությունից խուսափելու համար: Ահա թե ինչու ներքողական բանաստեղծության մեջ տեղ են գտնում ազերական իշխանությունների ճիրաններում հայտնված Արցախին բնորոշ այսպիսի տողեր. «*Դու սևագույն իմ ծիածան// Եվ սևագույն լույս ու արև...¹⁰*»: Գրողի ըմբոստությունն ակնհայտ է: Դա պարզորոշ ձևով երևում է Գաբրիելյանի նաև դարաբաղյան բարբառով գրված գրեթե բոլոր գործերում: «Արցախի ֆիդայիներին» բանաստեղծության մեջ Գուրգեն Գաբրիելյանը գովերգում է հերոս որդիներ ծնող մայրերին, ապա դիմում է ֆիդայիներին, որոնք նախնիներից ժառանգել են նրանց ուժն ու կորովը:

Բանաստեղծ Զր. Բեգլարյանը ազգային-ազատագրական պայքարի առաջամարտիկներից է: Շարժման հենց սկզբից նա իր գործում ու ամնիջական մասնակցությամբ համախմբում էր ժողովրդին: Իր ստեղծագործություններում բանաստեղծը ներկայացնում է հայրենիքի վառ գույները, արցախցու ազնիվ նկարագիրը, նրա հայրենասիրությունը, խիզախությունը, հյուրասիրությունն ու բարությունը, ամննացորդ նվիրվածությունն իր հողին ու աշխատասիրությունը: Եվ բազմազան են նրա պոետական հնարանքները: Ուշադրություն դարձնենք բանաստեղծի «խելագար էինք» արտահայտությանը, որն, անշուշտ, ընթերցողին հիշեցնում է չարենցյան «խելագարված ամբոխների» մասին: Եվ միանգամից «խելագար» հասկացությունն իմաստավորվում է ժողովրդական ըմբոստությամբ, ազատության համար բուռն պայքարի ոգով, որը բնորոշ է հայ մարդու հոգեկերտվածքին՝ սկսած ամենահինագույն ժամանակներից: Եվ դա իր լավագույն արտահայտությունն է գտել նաև «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպում: Խոսքը հայկական ծռության մասին է: Զրաչյա Բեգլարյանի գրչի տակ այն նոր կերպարով ու սոցիալական դաշտի մեջ է ներկայանում ընթերցողին:

Զրաչյա Բեգլարյանի երգը, հիրավի, եզերքային բնավորություն ունի իր խորքերում, Արցախ է ներկայացնում, գրողի յուրաքանչյուր բառ շնչում է ազգային այն առանձնահատուկ հատկանիշներով, որոնք բնորոշ են դարեր շարունակ ազատության համար մաքառող հային: Այս տեսակետից առանձնանում է նաև գրողի «Մեր կողը» ստեղծագործությունը: Այստեղ ոչ միայն սոցիալական, այլ նաև հոգեբանական խնդիրներ է արծարծում Զր. Բեգլարյանը՝ ցույց տալով, որ «արցախցու կողը» դիմակայուն է դառել, «հաստացել» ընդդիմանալով, նենգ ու ստոր թշնամիներից պաշտպանվելով, ավելին՝ ոսոխին պարտության մատնելով, չթողնելով, որ շղթայեն մեր լեռների ազատությունը: Եվ բանաստեղծության մեջ գրողի խոհերի ու փիլիսոփայական խորհրդածությունների կենտրոնածիղ ուժը դառնում է արցախյան բարբառից պոկված մի սովորական բառ՝ որձաբար, այսինքն՝ չկոտրվող, ամուր, անառարկելի կոշտ ու պինդ: Իր հոգու ներքին ապրումներն ամփոփող այդ մի հատիկ բառի մեջ Զրաչյա Բեգլարյանը տեսնում է ոչ միայն

¹⁰ Գաբրիելյան Գ., Արցախյան նվագարան, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2002, էջ 102:

հայկական բնավորություն, այլև անառիկ օրրանի պատմությունն ու հավերժությունը: Ինչու չէ՝ նաև աշխարհագրությունը: Բանաստեղծը վերահմաստավորում է ազգի լինելության խորհրդանիշը ներկայացնող Ավարայրը և՛ ընդգծելով, որ, ուր ժողովրդի ոգու պահպանության համար կռիվ է մղվում, այնտեղ էլ մեզ համար շարունակվում է մեր Ավարայրը: Փիլիսոփայական խորհրդածությունները բանաստեղծը խտացնում է ընդամենը երկու կարճ տողում. «Որտեղ Ավարայր՝ // ես այնտեղ թուր եմ¹¹»: Հրաշյա Բեգլարյանի պոետական նկարագրին խիստ հատուկ է խոսքի ներքին պոլեմիկան, որը ի հայտ է գալիս ոչ միայն ազատամարտին նվիրված կամ այն նկարագրող գործերի մեջ, այլ նաև այն ստեղծագործություններում, որոնք, ինչպես ընդունված է ասել, նախապատրաստել են շարժումը՝ ընթերցողին մշտապես տանելով դեպի արդարության ու ազատության համար հասունացող պայքարը: Դրանցից են նաև «Պարաբաղ», «Ինձ մի հարցրու» գործերը: Բանաստեղծի համար քարը մատյան է, որովհետև քարին գրվածը մնայուն է և չեն կարող այրել, «տանել բարբարոսները», ահա թե ինչու արցախցին մեսրոպյան այբուբենը թողնում է և՛ շիրմաքարերին հայոց նահատակների, և՛ արքյուրների հուշաքարերին, և՛ կամուրջների կամարներին, և՛ մանավանդ, «լեզվի վրա մեր մանուկների¹²»:

Սովսես Յախշունցն ի սկզբանե հայտնի էր Արցախում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության լավագույն մասնագետներից մեկը: Սակայն շուտով նա հայտնվեց ազերական անվտանգության աշխատողների ուշադրության կենտրոնում: Պատճառը՝ Սովսես Յախշունցը գրում է բանաստեղծություններ և այն էլ՝ ազգային (ազերիների բնորոշմամբ՝ նացիոնալիստական) բնույթի: Եվ պատահական չէ ամենևին, որ երբ սկսվեց արցախյան ազատագրական շարժումը, առաջիններից մեկը Շուշիի բերդում հայտնվեց արդեն պատկառելի տարիքի հասած (ութունամյակին մոտ), տեսողությունը գրեթե կորցրած մանկավարժ-բանաստեղծը, որը ոչ միայն գեղարվեստական խոսքով, այլև գործով ևս մասնակցում էր շարժմանը: Ազատության, պարտքի ու գործողությունների մասին Յախշունց գեղագետն ունի իր սեփական մոտեցումները, որոնք լավագույն արտահայտություն են գտել նրա պոեզիայում, առավել ևս՝ պատերազմական թեմայով գրված գործերում: Այս առումով հատկանշական է բանաստեղծի «Օրհներգ» բանաստեղծությունը, ուր նա միասնականության կոչ է անում հայ ժողովրդին, հորդորում անվեհեր մնալ ազատության ու անկախության համար պայքարում, որովհետև փրկությունը միայն ու միայն «ինքնիշխան մեր նոր պետության» մեջ է տեսնում: Բանաստեղծն, անդրադառնալով Սովսես խորենացուց մեզ սասած բավականին դիպուկ և իմաստուն արտահայտությանը՝ «փոքր ածու», միաժամանակ մեր նախնիների կատարած սխրանքների մասին է հիշեցնում. «Որովհետև մենք թեպետ փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անզամ օտար թագավորությունների կողմից

¹¹ Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2000, էջ 14:

¹² Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2003, էջ 16:

նվաճված, բայց և այնպես մեր երկրումն էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել...»¹³: Պոետը հաստատում է, որ ինչքան էլ դժվարին է եղել մեր ճանապարհը պատմության քառուղիներում, այնուամենայնիվ, մենք հաղթահարել ենք այն, քանզի և մեր գործն է արդար, և նպատակը՝ վեհ:

Արցախյան համազգային շարժումն առանձնացավ մեր պատմության մեջ մի կարևոր ու էական կողմով ևս, այն իր մեջ ընդգրկեց յուրաքանչյուր հայի՝ աշխարհի որ ծագում էլ նա լիներ, ամբողջ հայությանը, ժողովրդին: Եվ, անշուշտ, պայքարի հաջողության գրավականներից մեկն էլ հենց դա է: Եվ օրինաչափ է, որ ազատագրական շարժման գաղափարախոսներից մեկն էլ, «էն գլխից», դարձավ հայ մանկագրության մեջ արդեն անուն հանած պոետ Յուրի Սահակյանը: Անցյալ դարի վաթսուհինգականներին, երբ քաղաքական «ծնհալ» էր սկսվել խորհրդային երկրում, ծնունդ առավ Յուրի Սահակյանի «Մի քնեք, տղաներ» բանաստեղծությունը, որը սթափության ու պայքարի կոչ էր փաստորեն և իր տողատակերում ավելի շատ մտքեր էր պարունակում, քան բառերի մեջ: Զարթուցիչի առաքելություն էր ստանձնել այդ բանաստեղծությունը: Յուրի Սահակյանի արցախյան ազատամարտի մասին գրած երգերը շնչում են խորը հայրենասիրությամբ: Այս պարագայում արդեն խիզախությունն ու սխրագործությունը, մաքառումը, անվեհերությունը՝ որպես գեղագիտական յուրօրինակ կատեգորիաներ, ի վերջո, համաձուլվում են ազատասիրության ու հունամիզմի գաղափարների մեջ:

Գեղարվեստական բարձր մակարդակով են գրված Յուրի Սահակյանի «Ավարայրի դաշտում», «Պատերազմ», «Այրին», «Սունգայիթ», «Զինվորը», «Կորսված շիրիմներ», «Դավաճան է նա, ով հող է զիջում», «Մասիսին նայող հայը», «Նա մեծ էր, անշուշտ՝ ծնված ցպահանջ» և այլ բանաստեղծություններ, որոնք տողերի ներքնատար շարժումներում կրում են պատերազմական գործողությունների ամբողջական նկարագիրը: Գրողի «Դավաճան է նա, ով հող է զիջում» բանաստեղծությունը, որը նվիրված է մարտնչող շահունյանցիներին, ռազմակոչի մի փայլուն օրինակ է: Բանաստեղծը հորդորում է հայոց քաջերին՝ երդվել Մռավին, Թարթառին, «ընկերներին քաջ ու նահատակ» և փրկել հողը, «դարձնել անառիկ»: Ռազմաշունչ բանաստեղծությունների մեջ արդեն քնարերգուի խոսքը մարտական հնչեղության նոր որակներ է ձեռք բերում, ոգևորում, ոգեշնչում: Եվ պիտի ասել, որ այն հոգևոր աղերսներ ունի հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի «Ռազմակոչ»-ի հետ, ուր Վարպետն իր խոսքն ուղղում է ժողովրդին՝ փիլիսոփայական ընդհանրացումներն ամփոփելով կյանքի ու լուսի հաղթանակի ու հավերժության մեջ. դեպի ռազմի դաշտ, դեպի հերոսացում, դեպի բարձունքը մեծ Հաղթանակի:

Իրադարձությունները փոխում են նաև մոտեցումները, արժեհամակարգերը, ընկալումները նորանում են, մեկնությունները կառուցվում միանգամայն այլ ելակետերի վրա: Ողբերգական ժամանակը ծնուն է իր մոտեցումը՝ ցանկացած երևույթի նկատմամբ: «... Հայ

¹³ Խորենացի Մ., Պատմություն Հայոց, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1968, էջ 70:

գրականության գրեթե բոլոր արժեքավոր գործերը,- գրում է գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը,-ողբերգական իրավիճակների ու կեցության ծնունդ են... Հայ գրողը որդեգրեց ոչ թե պատերազմը, թեկուզ հաղթական, փառաբանելու, այլ պատերազմներին ոչ ասելու քաղաքականությունը, ոչ թե զինվոր-ազատամարտիկի հաղթանակները ներբողելու, այլ նրա՝ հաղթանակից հետո իր երկրում որպես լուսանցքի մարդ ապրելը պատկերելու քաղաքականությունը: Ու հայ գրողը պատկերեց ոչ թե բերկրանքը, այլ ցավը, ոչ թե նվաճումը տարածքների, այլ կորուստը հազարավոր հրաշալի հայորդիների¹⁴: Եվ ապա նշում է գրականագետը, թե արցախյան ազատամարտն «այդտեսակ ընկալումների» ինչպիսի դրսևորումներ ունեցավ: Ասենք, որ այս տրամադրությունները, անշուշտ, մարդասիրական ընդհանուր հենքի վրա են մշտապես ի հայտ գալիս: Բանաստեղծի փիլիսոփայությունն ունի երևույթի խորքերը բացելու միտում, որը և խնդիրը տեղափոխում է բարոյական սկզբունքների ղրղոտ, այսինքն՝ այլ հարթություն: Նախ՝ առաջին հայացքից թվում է, թե Յուրի Սահակյանը հակասում է ինքն իրեն՝ մեկ բանաստեղծության մեջ ռազմի կոչ է հնչեցնում, մյուսում գտնում է, որ ով էլ հաղթի պատերազմներում, պարտվողը մարդկությունն է: Բայց երբ երևույթը ներսից ենք դիտարկում, մանավանդ՝ բանաստեղծի ենթատեքստը բացելով, տեսնում ենք, որ, ինչպես ասում են, պարտություն չէ ամեն պարտություն, ոչ էլ հաղթանակ է ամեն հաղթանակ, հայտնվում ենք հարաբերականության դաշտում: Յու. Սահակյանը «Մի քնեք, տղաներ» բանաստեղծության մեջ արդեն ամրագրել է, որ Չարի և Բարու կռիվը հավերժական է, ուրեմն, Բարու հաղթանակը հենց մարդկության հաղթանակն է: Եվ եթե պատերազմը մղվում է հանուն ազատության, խաղաղության, չարի ոչնչացման, ուրեմն՝ դա մարդասիրություն է, իսկ եթե կռիվ են մղում տարածքներ ձեռք բերելու, ուրիշին ստրկացնելու համար, այս դեպքում արդեն, իրոք, պատերազմը մարդկության պարտությունն է:

Ազատամարտի արցախյան պոեզիայում իրենց արտացոլումն են գտել բանաստեղծական «զենքի» բոլոր տեսակները՝ եւ բոցաշունչ կոչային հրապարակագրությունը, եւ զինվորական սրտի հոգեպարար քնարերգությունը, եւ մեծակտավ քնարական ու էպիկական պոեմները: Այդ պոեզիան քիչ բան չի արել, որպեսզի ահեղ իրադարձություններում մարդկանց մեջ արթնացնի պատասխանատվություն, ըմբռնումն այն բանի, որ յուրաքանչյուրից է կախված հայրենիքի ճակատագիրը: Ժամանակի շունչ ու հրամայականի տակ փոխվեց եւ ազատամարտի արցախյան պոեզիայի, այդ թվում՝ եւ Նվարդ Ավագյանի ստեղծագործությունների ներքին երակը: Բանաստեղծուհին ճակատ էր ճամփել իր երեք զավակներին: Արդյո՞ք, մաեւ այդ պատճառով չէ, որ նրա լավագույն ստեղծագործությունների գաղափարը կայանում է ուժի արթնացման, համառության ու հաստատականության, հավատի եւ մարտնչելու պատրաստականության, մինչ ի մահ կանգնելու եւ հաղթելու. եւ, ի վերջո՞ հավատարմության մեջ, ոչ թե խոսքով, այլ գործով:

¹⁴ Նիկողոսյան Ա., Բարձունքը մերն է, տղերքը չկան..., Granish.org, www. imyerevan. com:

Որովհետև մահն անգամ ընդունակ չէ կտրելու ազատամարտի ժողովրդական ոգին:

Նվարդ Ավագյանի ազատամարտի մասին գրված ստեղծագործությունների մեծ մասն ունի որոշակի սյուժետային գիծ, նրանում եթե չի ներկայացվում կոնկրետ պատմություն, ապա անպայման առկա է դրվագ, որն իր մեջ ֆաբուլա է կրում: Այդպիսի բանաստեղծություններում ընթերցողը զգում-տեսնում է իրադարձությունների ընկալումը հեղինակի կողմից եւ նրա ներաշխարհը: Ապրումի անմիջականությունը բանաստեղծուհու ստեղծագործության գեղարվեստական միջոցներից է, ինչի վառ վկայությունն են նրա խոհական չափածո «գրույցները»: Անկեղծությունն էլ նվիրվածություն, անձնապես վերապրած, ոչ հնարովի զգացմունքներ, էժան պաթոսի բացակայություն այս ամենը կազմում են Ն. Ավագյանի ազատամարտն արտացոլող ստեղծագործությունների հենքը: Բանաստեղծուհին ձգտում է խուսափել խոսքի մեջ փակագծերը մինչև վերջ բացելուց, որը և նրա խոհը դարձնում է վարակիչ, ասելիքը՝ համոզիչ: Կարողանում է բառի մեջ՝ խոսքի համարժեք չափով, պահպանել նաև հեղինակային ներքին լռության ձայնը, մի հանգամանք, որ մեծապես նպաստում է ասելիքի հավաստիությանը, մանավանդ, երբ նկարագրվում են պատերազմական լարված գործողություններ: Ի դեպ, գեղարվեստական այս հնարանքը համաշխարհային գրականության մեջ բազմաթիվ կիրառումներ ունի, որոնցից մեկն էլ Ֆ. Պետրարկայի «Կանցոն» հանրաճանաչ բանաստեղծությունն է, ուր Կեսարի կերպարը ներկայացվում է բացառիկ վարպետությամբ: Ավելորդ չենք համարում նշել, որ «Կանցոն» («Ով իմ Իտալիա, վերքերիդ համար») քերթվածքի մասին իր տեսակետն է հայտնել նաև ականավոր գրող ու գեղագետ Ու.Էկոն՝ վերոնշյալ տողերի ներքին բազմակետը մատնանշելով որպես լռություն և «ոճական բառադարձման կամ ճարտասանական ձևի նմուշ»¹⁵:

Արցախյան շարժման իրադարձություններն ուրույն արձագանք գտան բանաստեղծ Արտեմ Զարությունյանի ստեղծագործություններում: Այդ թեմայով իր առաջին գործերը նա տպագրել է «Արցախ» հանդեսում, իսկ 1997-ին լույս է տեսնում Ա. Զարությունյանի «Նամակ Նոյին» սովոր ժողովածուն: Այստեղ բանաստեղծի տեսադաշտում ամբողջ մոլորակն է՝ հասարակական-քաղաքական այն տեղաշարժերով, որոնց առանցքում Արցախն է՝ ազատության մաքառումի մեջ, միջազգային քաղաքականության սմամեջ բանակցություններն են:

Արցախի անզիջում գոյապայքարը բանաստեղծ Արտեմ Զարությունյանը փորձում է տեսնել աշխարհաքաղաքական բարդ ու խրթին իրադարձությունների ընդհանուր համապատկերում, ուր ավելի հստակ է երևում փոքրիկ երկրամասի ազատության համար մարտնչող մարդկանց ներքին կրակը, նրանց մաքուր երազը, նվիրումը, արդարասիրությունը,

¹⁵ Էկո Ու., Գրառումներ «Վարդի անվան» էջերին, Երևան, «Անտարես» հրատարակչություն, 2014թ., էջ 69:

հայրենի լեռների վրա խաղաղ ապրելու և ստեղծագործական աշխատանքով զբաղվելու մղումը: Արտեմ Յարությունյանի պոեզիան մենախոսության և մեկնաբանող երկխոսության համակարգ է՝ իրերի և երևույթների անձնակառուցված մեկնությամբ, ուր զարմանք է պատճառում երևակայության ու միստիկ տեսիլային պատկերավորությունը: Բանաստեղծն անձնապես վերապրել է 20-րդ դարի աղետների ու դարի չարիքների պատմությունը՝ ցեղասպանություն, ֆաշիզմ, պատերազմներ, ահաբեկչության արհավիրքներ և այլն:

Բանաստեղծ Ռոբերտ Եսայանն արցախյան շարժմանն արձագանքել է և՛ գրչով, և՛ զենքով: Արցախյան պայքարի դառնաշունչ օրերին ազատամարտիկ բանաստեղծը լույս է ընծայում «Յենակետեր» (1989թ.), «Ծարաված հետքեր» (1991թ.), «Տարածություն և հոգի» (1992թ.) գրքերը, որոնցում գետեղված են արցախյան ազգային-ազատագրական պայքարից ծնված քերթվածքներ: Նրա մարտաշունչ երգերի մեջ ներկայացվում է զինվորի հոգեբանությունը, որի երազանքը «լեռան աղեղ» է դառնում հորիզոնի վրա, քարերին անգամ հույսի հրդեհներ են բռնկվում («Ձինվորի երգը»), արյուն է թափվում ամենուրեք և «արյան հետ՝ փետուր»: Պատկերավորությունն ու մտքի ներքին դիմամիզմը հատուկ են Ռոբերտ Եսայանի մտածողությանը: Նա բավականին քիչ բառանյութի մեջ կարողանում է տեղադրել իր ասելիքը՝ որքան էլ այն լինի անընդգրկելի: Ազատամարտի մասին գրված երգերի մեջ, ապրումների ու զգացումների անխառն անմիջականության առումով, գեղարվեստական նոր որակի արտահայտություն են Ռոբերտ Եսայանի այն գործերը, որոնք գրվել են խրամատներում՝ զոհված զինակիցների հիշատակին, թարմ ու անանցողիկ տպավորությունների տակ, այն դաժան ու ծանր պահերին, երբ «երկնքից երկիր ձգվող սյունը... մոխիրն» էր: Գրողի այքի առաջ բարձրանում է զոհվածների անունները կրող խաչքար-շիրնաքարերի անտառ: Եվ խաչքարերից յուրաքանչյուրը մի ճակատագիր է, որից «լույս է ընպում գալիքը»:

Պատերազմական լարված իրավիճակները երկրի համար մարտնչող բանաստեղծներին ոչ միայն գրական սյուժեներ, այլև ոճ ու մտածողություն են հուշում, ստեղծում են գեղարվեստական թարմ խոսքի անմիջականություն, միտքն ու պատկերը դարձնում տպավորիչ, ձայն հայրենականն՝ ավելի հստակ ու համոզիչ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Արցախի ազատագրական պայքարը սկզբնապես ձևավորվեց համազգային շարժման նշանաբանով: Արցախցիներն առաջ քաշեցին Ադրբեջանի գաղութային ենթակայությունից ազատագրվելու և մայր Հայաստանին միավորվելու խնդիրը: Շարժումը Հայաստանում ղեկավարում էր «Արցախ» կոմիտեն: Այս հիմքի վրա ձևավորվեց Հայոց համազգային շարժում (ՀՀԾ) կուսակցությունը, որն առաջադրեց գաղափարական իր սկզբունքներն ազգի զարգացման ուղիների վերաբերյալ: Պատմության

խնդիրը բարդանում էր նաև նրանով, որ այն առանձնացվում էր ազգային-քաղաքական ու դիվանագիտական նոր կողմնորոշումներով՝ «մշտական թշնամիներ ու մշտական բարեկամներ չեն լինում», «երրորդ ուժի բացառման օրենքը» և այլն: Արցախահայ միտքը որևէ արձագանք չունեցավ պատմության այսպիսի ժխտման հանդեպ, մանավանդ, որ ՀՀԸ-ի տեսաբանների դրույթներում որոշակի էր դրվում հակառուսական միտումը՝ հօգուտ թուրքական կողմնորոշման: Արցախի ազատագրական պայքարն ուղղված էր թուրքական, որ նույնն է՝ ադրբեջանական բռնության դեմ:

Արցախյան ազատագրական շարժումը գաղափարական լիցք էր ստանում նաև պատմության դասերից, խամսայի մելիքությունների փորձից, Վաչագան թագավորի հայրենասիրական գործունեությունից և այլն: Այս իմաստով արցախյան ազատագրական շարժման պատմության դասերը դառնում են Արցախի պոեզիայի գլխավոր մոտիվներից մեկը:

Խոսելով գեղարվեստական երկերի պատմականության մասին, Ս. Սարինյանը ժամանակին նկատել է. «Պատմականությունը գեղագիտական կատեգորիա է, որ գոյանում է կառուցվածքային բոլոր տարրերի, ձևի և բովանդակության բաղադրիչների ներքին միասնությունից: Դա բանաստեղծության ներքին տրամաբանությունն է, սիմվոլ-գաղափարի ծագումը, ընթացքն ու վերջավորությունը, որ գոյանում է պատկերավոր միավորների բազմակի կապերից ու պատճառական ներհյուսումներից, ժամանակի ու տարածության հարաբերումներից: Այս տեսակետից պատմականությունը ստանձնում է գեղագիտական կարևոր ֆունկցիա և մեծապես պայմանավորում բանաստեղծության գեղագիտական-փիլիսոփայական տարրությունը»¹⁶:

Պատմության փիլիսոփայությամբ է հագեցած ազատամարտի արցախյան պոեզիան:

Գրականության մեջ ընդունված միջոց է՝ գրողները ներկայի իրադարձությունները ներկայացնելու համար դիմում են պատմական այս կամ այն փաստին, նրա վրա կառուցում իրենց խոսքն ու ասելիքը: Այդպես վարվեց և բանաստեղծ Յր. Բեգլարյանը, սակայն՝ փոքր-ինչ այլ հարթության վրա, գեղարվեստական ուրույն միջոցներով: Խոսքը գրողի «Խաչենաբերդ» պոեմի մասին է: Մի ստեղծագործություն, որը Յր. Բեգլարյանի պոեզիայում՝ թե՛ իր արժարժած խնդիրներով, թե՛ գեղարվեստական առանձնահատկություններով ստեղծագործական նոր փուլ է նշանավորում: Պոեմի սյուժեն բանահյուսական հիմք ունի, որը հիշատակվում է նաև Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» մեջ:

Բեգլարյանը դիմում է պատմական անախրոնիզմի՝ անտեսելով Արցախում Հինգիզ խանի արշավանքի չգոյության փաստը, ենթմաստը հանգեցնում է հենց ամանցանելիության առեղծվածին: Մշտապես արհամարհելով պաշարման սպառնալիքը՝ Արցախում հավերժ կանգուն են

¹⁶ Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1970, էջ 178:

մնում խաչենաբերդն ու Գանձասարը... Այս երկու ամրոցներն Արցախի անառիկությունն են խորհրդանշում ու մարդկանց հավատը: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ նվաճողների արշավանքները կասեցնելու համար շինարար ժողովուրդը միշտ պաշտպանության միջոց է ընտրում իր հավատի տները՝ հույսը դնելով ձեռքի ուժի և ամենակարող Աստծու վրա: Տեղի է ունենում ճակատամարտը, բախվում են վահանները և, հայ քաջորդիների հաղթական զարկերից բնաջնջվում է Չինգիզ խանի բանակը, հայոց հպարտ որդիք անհաղթ են մնում: Եվ հայոց իշխանի հաղթությամբ ցնծում է Արցախը՝ հաղթության լուրը տանելով մինչև Տարոն ու Ջեթուն, մինչև Սասնա տուն... Եվ «դեռ գնում է դարերի միջով Սմբատ իշխանի երթը հաղթական»: Այս հաղթական երթի շարունակության վրա են պոեմում հենված արցախյան դասերը: Այսպիսով՝ ազգային-ազատագրական շարժման իմաստավորվում է պատմության դասերով, որոնք, Յ. Բեգլարյանի ընկալմամբ, դառնում են գործունեության ուղեցույց:

Պատմականությունը Վարդան Չակոբյանի գեղարվեստական մտածողության անբաժանելի հատկանիշն է: Ժամանակը, նրա ընկալմամբ ընդհատում է չունի, ինչպես և ճանապարհները՝ վերջավորություն: Այդպես է նա պատկերել դեպքերի ընթացքն արցախյան ազատամարտի իրադարձություններում: Բացահայտել Արցախի պատմության դասերը, նշանակում է ճանաչել նրա գոյաբանության փիլիսոփայական հիմունքներն իբրև հայրենիք, բնաշխարհ, կենցաղավարություն, կրոն, ֆիզիկական ու հոգևոր ինքնություն: Այդ հատկանիշները ներկայանում են երևելի անուններով, դեպքերով, ավանդություններով, հուշարձաններով ու առարկայական հուշիկներով: Պատմության փիլիսոփայությունն առավելապես արտահայտվում է ավանդույթներում, գեղարվեստականորեն ձևաբանվում էպիկական ժանրերում՝ լեգենդ, պոեմ, ասք և այլն: Այս իմաստով երևույթը դիտարկում ենք առավելապես Վարդան Չակոբյանի ասք-պոեմներում:

Միանգամայն տպավորիչ է Վ. Չակոբյանը ներկայացնում Մաշտոցի աստվածային առաքելությունը «Մեսրոպ Մաշտոցն Ամարասուն» պոեմում: Արցախը հայոց առաջին գավառներից մեկն է, որ յուրացրեց մաշտոցյան գիրը և լեզուն ու իր պատմությունը վերստին ներծուլեց հայոց պատմության ընթացքին: Մաշտոցն ուղղություն տվեց հայոց պատմությանը, լեզվի ու հավատի հայտնությամբ ոգի ներշնչեց ազգային գոյությանը և անպարտելի մնաց թշնամական հորդաների ներխուժման հանդեպ:

Չակոբյանի գրական ներկայանակի գույները հարուստ են, և նա կարողանում է ստեղծել խիստ կոլորիտային կերպարներ: Եվ, որ ամենագլխավորն է, Վ. Չակոբյանի ստեղծագործություններում գլխավոր շեշտը դրվում է ոգու հայկականության վրա: Ժամանակին հետաքրքիր դիտարկում է կատարել անվանի գրականագետ Սևակ Արզումանյանը. «Իմ համոզմամբ, ավանդույթներից ամենագլխավորն ազգային ոգու պահպանման գեղագիտական սկզբունքն է, որը Վարդան Չակոբյանի պոեզիային տալիս է առանձնակի փայլ ու հմայք: Այս առումով նա իր սերնդակիցների մեջ չունի հավասարը, իսկ դա այն չափանիշն է, որով

բանաստեղծը երկարակեցություն է ապահովում իր համար մայրենի գրականության անդաստանում»¹⁷:

Թե՛ պատմական անցյալը մարմնավորելու, թե՛ գեղարվեստական միջոցների ու ձևերի առումով բոլորովին նոր մակարդակով է Վարդան Չակոբյանը ներկայանում իր «Տաճարն Աստծո» պոեմում, ուր նա առաջադրված գաղափարների ու խնդիրների ազգային հենքի վրա բարձրացնում է համամարդկային հարցեր՝ վիպերգի համար գլխավոր հերոս ընտրելով մարդուն, որը և Աստծո Տաճար է: Վարդան Չակոբյանի մտածողության նորարարական շունչն այս երկում խիստ նկատելի է թե՛ կերպարների ստեղծման, թե՛ ժանրային ձևույթի, թե՛ գաղափարական խնդիրների լուծման և թե մի շարք այլ առումներով: Ուստի մտածողությունը հիմնում է գրական գրեթե բոլոր ժանրերի կիրառմանը, սակայն՝ յուրովի, որը և նրա լեզուն դարձնում է ավելի հարուստ ու պատկերավոր, կերպարները՝ ամբողջական: Արցախի համար արյունոտ ու ծանր օրերի ծնունդ է այս վիպերգը: Արցախի պատմության դասերում ուսանելի շատ բան կա: Եվ Արցախի պատմության դարերի փորձին գիտակ բանաստեղծն ավստոսանքի խոսք է ուղղում Բարեպաշտին, թե «ինչու, ինչու... մոռացար հաճախ, // որ // այդ բողբոջուն գրերի կողքին՝ // դրանք պահելու, փրկելու համար, // թողնել // պատկերը լարված նիզակի, //Նիզակն Առանի»¹⁸: Այս դասն է, որ ուսուցանում է բանաստեղծն ազատամարտի ելած արցախցիներին:

Վարդան Չակոբյանի արցախապատմի փիլիսոփայական համակարգումը կարելի է համարել «Քրիստոսի ծաղիկները» ասքը: Այստեղ Արցախն է տիեզերական համակ անդրադարձներով. «Ան սամումը եղեռնական մոլեգնում է Արցախս սուրբ լեռների մեջ»¹⁹, «Արարատի բարձրությունը պետք է չափել Աբովյանի քայլերով միայն»²⁰:

Չայն հայրենականի անանձնական արձագանքներն ու պատմության դասերը լսելի են նաև «Պոեմ իմ մասին կամ 24-ն անց 81 թուպե» մենախոսությունում:

Պատմության ուսանելի դասերի հետ անհրաժեշտ է նաև ունկնդիր լինել կյանքի ու ժամանակի հարափոփոխ երևույթներին: Արցախյան արդի շարժումը շատ բան փոխեց նաև մեր պատկերացումներում, և այս տեսակետից անկարելի է շրջանցել հասարակական հեղաբեկումների անխուսափելի հետևանքները, որոնց մեջ դարձյալ նույն պատճառն է, որը և, ի վերջո, միշտ «անցնում-դառնում է հետևանք»²¹ ըստ Չեզելի

¹⁷ Սողոմոնյան Տ., Տաճարի ճանապարհին կամ մենարանի ուխտավորը, Ստեփանակերտ, ԼԴԴ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2007, էջ 13:

¹⁸ Չակոբյան Վ., երկեր, հատոր Գ, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատարակչություն, 2007, էջ 257:

¹⁹ Չակոբյան Վ., Քրիստոսի ծաղիկները կամ դադարներ կտրուկ շրջադարձներով, Երևան, «Չայաստան» հրատարակչություն, 2001, էջ 25:

²⁰ Նույն տեղում, էջ 107:

²¹ Չեզել Ֆ., Փիլիսոփայության ներածություն, Երևան, Չայաստանի պետական հրատարակչություն, 1964, էջ 166:

փիլիսոփայական տրամաբանության: Վարդան Հակոբյանը ոչ միայն պատմությունն է արդիականացնում, այլև պատմականացնում է արդիականը: Եվ այս համադրության մեջ միանգամայն որոշակի է նշմարում իրական ու տրամաբանական լուծումները: Գերությունը հավերժական կացություն չի կարող լինել, և անխուսափելի է ազատագրումը, քանզի «մեր պահանջներն արդարացի են», և հասել ենք մի սահմանի, երբ լռելն ու ներելը անհնարին են:

Պատմության թեման Սոկրատ Խանյանի արցախապատումի գլխավոր մոտիվներից է: Այս առումով առանձնանում է նրա «Արցախի արծիվը» պոեմը: Իններորդ դարի իրադարձություններն այստեղ Ս. Խանյանը փորձում է ցույց տալ մեր ժամանակում ծավալվող դեպքերի ու անցքերի դիտակետից, Եսայի իշխանի, Յովսեփի կերպարների մեջ ներկայացնում է երկրի նվիրյալներին, որոնք ամեն ինչ անում են հայրենի եզերքի պաշտպանության համար:

Սոկրատ Խանյանի գրչին են պատկանում նաև երեք վավերագրական պոեմներ, որոնց թեման առնված է արցախյան պատերազմի իրադարձություններից. «Նահատակ լուս», «Մհեր» և «Արցախուհի»:
«Նահատակ լուս» պոեմը նվիրված է Մոնթե Մելքոնյանի արցախյան սխրագործությանը: Պոեմը կենսագրական կառուցվածք ունի և պատկերում է հերոսի կերպարի հասունացման ընթացքը, հայացքների կազմավորումը և հայրենիքի հանդեպ նվիրումի հոգեբանական ձևավորումը: Խանյանի «Մհեր» և «Արցախուհին» պոեմները, եթե կարելի է ասել, անյուժե են, այսինքն զուրկ են պատմական ատաղձից և, ըստ ձևույթի, հեղինակային խոսքի կառուցվածք ունեն: Մի բան, որ իմաստ է տալիս հերոսների վարքի ամբողջացմանը, դա պատմության դասերի հիշատակումն է: Ընդհանուր այս գաղափարի մեջ Խանյանը նշմարում է արցախյան ազատամարտի հաղթանակը:

Հատկանշական է, որ գրեթե բոլոր բանաստեղծները դիմում են ռեքվիեմին: Իր ռեքվիեմն ունի նաև Նվարդ Ավագյանը, գործ, որը փոքր-ինչ մեկանաղձոտ է, որոշակիորեն սենտիմենտալ և երկզույն վերապրումներով՝ «Պոեմը կառուցված է ութ ձայնային արծագանքներով՝ «Փրկիր ինձ», «Կրկնիր ինձ», «Գրկիր ինձ» և այլն, որոնցից թերևս վեցերորդ ձայնն է («Պատվիր ինձ») հուշում սիրո, կարոտի հղումները և իմացյալ մահով նահատակված զինվորի երդումը. «Սահմանն հայրենյաց զենքով են գծում»: Եվ եթե «Բանալին» և «Տիրոջ հետ» պոեմներում վիճակի գիտակցումն է փրկության աղոթքն առ Աստված, ապա նույնքան որոշակի է բանաստեղծի հայացքը, հակամարտ ուժերի իրավունքի և արդարության արժեքների ճանաչումը՝ վերին սահմանում:

Արցախի պատմության դրվագների գեղարվեստական մի ամբողջ շղթա են կազմում Արտեմ Հարությունյանի քերթվածքները՝ «Նամակ Նոյին», «Հուդայի արծակուրդը» և «Հեռուստապոեմներ» գրքերում: Այստեղ ամբողջ 20-րդ դարն է հայոց ազգային շարժման համաշխարհային առնչությունների ոլորտում: Ամեն ինչ սկսվում է «Նամակ Նոյին» ուղերձից: Նոր ջրիեղել է համակել աշխարհին, և բանաստեղծը տազնապով դիմում է նահապետին. «Նոյ, եթե կարող ես, Արցախը նույնպես// վերցրու լաստիդ վրա: Նոյ, ես դարբաղջի եմ և հուսով եմ //խնդրանքս չես մերժի, // որպես ապուպապերիս պապերից մեկը, //ես նկարդ տեսել եմ պապիս հին տան պատին, //կանաչ

դրախտում՝ Շուշիում, //որ հիմա ազատության Տապանն է տիեզերքում, // չնայած քրեղեղը վաղուց է չքվել»²²:

Արտեմ Հարությունյանի ոճին առանձնահատուկ է բանավեճը: Իրականությունը նա դիտում է իդեալականի ու առօրեականի համադրության մեջ և անթաքույց ուղղամտությամբ իրական-անբնականին հակադրում է իր իդեալը: Պոստմոդեռնիզմը լիակատար ազատություն է տալիս Արտեմ Հարությունյանին՝ մերժելու այն ամենը, ինչով կառավարվում էր անցած հասարակարգի գրական, գաղափարական դրվածքը, և այն ամենը, ինչ շահադիտորեն նենգափոխում է արդի քաղաքակրթության իրավական կանոնները:

«Ռեքվիեմ» պոեմում Ռոբերտ Եսայանը հայրենի Արցախի գոյապայքարի պատմահոգեբանական աղերսները դիտում է Հայաստան աշխարհի ճակատագրական անցումներով, թերևս փոքր-ինչ վերացարկված ցնորքի երանգով և նկատելիորեն խտացված հառաչանքի թողությամբ: Բանաստեղծի երևակայությունը թևածում է պատմության ու ժամանակների խորհրդավոր անցումներում, մեծարում հայոց համճարն ու անցյալի սուրբ հիշատակները: Մտքի և զգացմունքի լարումները բանաստեղծի հուզաշխարհում վերաճում են տեսիլային ուրվապատկերների, որոնք իմաստավորվում են խորամիտ ասույթներով՝ «գոյության տենդից ժայթքող արցունքերը հավատի խաչքարեր են», «Երազը ապագայի ցողոտ ճանապարհն է», «արյան կաթիլներից ելնում է եկեղեցին, Ջանգի ղողանջներով վերադառնում է աքսորյալ խիղճը»:

Հետաքրքիր հղացում է Արիս Արսենիի «Լռության թուպ» պոեմը: Նվիրելով այն հայրենի Կոճողոտ գյուղի նահատակներին՝ հեղինակն անուն առ անուն գեղարվեստականորեն գրանցում է յուրաքանչյուրի կենսագրական տեղեկանքը և լրացնում այն նահատակի նվիրական երդումի խոսքով: Արիս Արսենիի պոեմներում զգալի են ազգային ճակատագրի դառնագին վերապրումները, բայց առույգ է հնչում արյան կանչի անպարտելիությունը հայոց պատմության դասերում:

Ընդհանրացնելով հարցի դրվածքն ատենախոսության այս հատվածում կարող ենք ասել, որ արցախյան ազատագրական պայքարը միաժամանակ ինքնաբացահայտման ու ինքնաճանաչման գիտակցական հայտնությունն եղավ: Դա առիթ հանդիսացավ Արցախի պատմության, ֆիզիկական ու հոգևոր հարստության նորովի բացահայտման, արցախյան բարբառի, բանահյուսության և մշակութային այլ ոլորտների ուսումնասիրության, որոնք իմաստավորեցին մեր ազատամարտի հաղթանակն ու անկախ պետականության կազմավորման գործընթացը:

²² Հարությունյան Ա., Նամակ Նոյին, Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1997, էջ 46:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Արցախյան պոեզիան և, ընդհանրապես, գրականությունը՝ հավատարիմ մնալով գեղարվեստական խոսքի մեր դասական ավանդներին, իր վրա է վերցրել մայր Հայաստանից բռնազատված հայրենական եզերքում ազգայինի պահպանման և հայոց պետականության ամրապնդման առաքելությունը:
2. Ձևավորվելով ազգային-ազատագրական պայքարի, սոցիալական, տնտեսական ու քաղաքական հեղաբեկումների պայմաններում՝ ազատամարտի արցախյան պոեզիան ձեռք է բերել եզերքային բնավորություն և կոլորիտ՝ իր մեջ ներառելով ժամանակի ռիթմերն ու պոլեմիկան:
3. Ազատամարտի արցախյան պոեզիան՝ վաղնջական ժամանակներից մինչև Դավթակ Քերթոզ, մինչև Գրիգոր Ներսիսյան ու Թաթուլ Հուրյան, մինչև մեր օրերը (Բոգոյան Ջանյան, Գուրգեն Գաբրիելյան, Հրաչյա Բեգլարյան, Վարդան Հակոբյան և ուրիշներ), զարգացման դժվարին ուղի է անցել և միանգամայն ուրույն ու հանդիչ գույներով է ներկայացնում մեր ժողովրդի ազատագրական պայքարի պատմության գեղարվեստական տարեգրությունը:
4. Ազգային-ազատագրական շարժումը հասարակական մտքի քննության առաջ դրեց հայոց պատմության վերագնահատության հարցը: Արցախի պատմագիտական միտքը մերժում է հայոց պատմության վերաբերյալ ժխտողական տեսակետները և պատմության դրվագներում հայտնաբերում մնայուն արժեքներ, որոնք ուսանելի դասեր ունեն ազգային ինքնության և ազատագրական պայքարի ձեռքբերումների հաստատման համար: Դա իր հստակ արտահայտությունն է գտել նաև արվեստի ու գրականության մեջ: Պատմական անցքերն ու իրադարձությունները, գեղարվեստական մարմնավորում ստանալով Գ. Ներսիսյանի, Թ. Հուրյանի, Բ. Ջանյանի, Գ. Գաբրիելյանի, Հր. Բեգլարյանի, Վ. Հակոբյանի ստեղծագործություններում, ներկայացվում են որպես անցյալի դաս ու գալիքի խորհուրդ:
5. Արցախյան գոյապայքարի երեք հիմնական փուլերում (անցյալ դարի 30-40-ական և 80-ական թվականներ) Արցախի գրական կազմակերպությունն ունեցել է բացառիկ կարևոր դերակատարություն՝ թե՛ ժողովրդական շարժումն ուղղորդելու, թե՛ սերունդների մեջ հայրենասիրության հուրը բորբոք պահելու և թե՛ ստեղծագործական հայտնությունների առունով:
6. Հայ քնարերգության դասական ավանդները, ինչպես նաև ռուս և համաշխարհային գրականության հարուստ փորձը՝ ազատագրական պայքարի գեղարվեստական մարմնավորման տեսանկյունից, յուրօրինակ ու ինքնատիպ կիրառություն են ստացել ազատամարտի արցախյան պոեզիայում՝ նորի ու ավանդականի փայլուն համադրությամբ, ապահովել գաղափարական բարձր որակներ:

7. Արցախյան բանաստեղծությունը՝ մշտապես գտնվելով հայրենի եզերքում հայկական ոգու պահպանման համար մղվող գոյամարտի կիզակետում, հայրենասիրության, հոգեբանական ապրումների խորության, քաղաքացիական նվիրումի, երկրի ու նրա վաղվա նկատմամբ պատասխանատվության, մարտունակության ու կենսունակության, երևույթների ընկալման, անմիջականության ու պատկերավոր մտածողության նոր հատկանիշներով է հարստացել՝ առավել ընդգրկուն դարձնելով գեղարվեստական խոսքի գործառնական (ֆունկցիոնալ) դերն ու գաղափարական նշանակությունը:

8. Արցախյան գրականությունը, արվեստն ու մշակույթը հայ ժողովրդի հոգևոր հարստության անբաժանելի մասն են կազմում և, բնականաբար, գտնվում են զարգացման մեկ միասնական, ընդհանուր պրոցեսի մեջ, գեղարվեստական խոսքի նույն զուգահեռների վրա:

Ատենախոսության թեմայով հրատարակված գրքերի և հոդվածների ցանկը

1. Ազատամարտի արցախյան պոեզիան, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2015թ., 32 էջ:

2. Ազատամարտի արցախյան պոեզիան, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2015թ., 170 էջ:

3. Արցախյան ազգային-ազատագրական պայքարի արտացոլումը «Արցախ» ամսագրում, Գիտական ընթերցումներ. գեկուցումների հիմնադրույթներ, Երևան, «Ձանգակ-97» հրատարակչություն, 2009թ., էջ 50-51:

4. Արցախյան ազգային-ազատագրական պայքարը արձակագիրների երկերում, Լրատու. գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատարակչություն, 2010թ., էջ 175-177:

5. Արցախյան գոյամարտի գեղարվեստական պատկերը Մարտիրոս Ռբնի արձակում, Լրատու. գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատարակչություն, 2011թ., էջ 133-137:

6. Արցախյան ազգային-ազատագրական պայքարի արտացոլումը հայ գրականության մեջ, Նարեկ. գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատարակչություն, 2011թ., էջ 48-52:

7. Արցախյան շարժումը Վարդան Յակոբյանի պոեզիայում, Գիտական տեղեկագիր. գիտական հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2011թ., էջ 122-127:

8. Արցախյան շարժումը Ջորի Բալայանի հրապարակախոսության մեջ, Դպրատուն. գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատարակչություն, 2014թ., էջ 69-76:

9. Ազատամարտի արցախյան պոեզիայի պատմական ուրվագիծը, Դպրատուն. գիտական հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատարակչություն, 2015, թիվ 3, էջ 72-78:

Григорян Амалия Вагановна

ОТРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ
В АРЦАХСКОЙ ПОЭЗИИ.

Диссертация на соискание ученой степени кандидата
филологических наук по специальности
10.01.02 – «Армянская литература новейшего периода».

Защита состоится 2015 года в ... часов на заседании
специализированного совета 003 Армянской и зарубежной литературы,
действующего в Институте литературы имени М. Абегяна НАН РА.
Адрес: г.Ереван, ул. Г. Лусаворича 15.

Резюме

Диссертация посвящена раскрытию проблем, идеологических и художественных особенностей национально-освободительной борьбы в арцахской поэзии.

В работе сжато представлен трудный путь, который прошла арцахская литературная организация в условиях азербайджанского деспотизма, литературные, философские, общественно-политические взгляды писателей, важная роль литературы в деле сохранения нации; были сделаны попытки рассмотреть как социально-культурные, литературные и исторические, так и экономические и политические корни данного явления в контексте общего времени.

Актуальность диссертации «Отражение национально-освободительной борьбы в арцахской поэзии» заключается в том, что ее научное изучение делает целостным общую картину развития тематико-идеологических и художественных тенденций в современной армянской лирике.

Национальные проблемы, поднятые в арцахской поэзии, всегда остаются злободневными для нашего народа, и их разностороннее исследование, различные художественные подходы и жанровые особенности дают возможность по-новому осмыслить явления, быть более корректными в их оценке.

Необходимо отметить, что интерес к военной тематике велик не только в нашей, но и в зарубежной действительности. Это обусловлено рядом факторов: беспощадная борьба не на жизнь, а на смерть в экстремальных условиях, более ярко выраженные человеческие качества, черты характера, целенаправленность, бурное течение действий. Все это не может не найти свое отражение в литературных произведениях. В литературе больше истории, нежели в самой истории.

Известно, что национально-освободительная борьба в советское время началась с Арцаха и сразу нашла отклик в международном сообществе. В диссертации мы обратили внимание на то важное обстоятельство, что арцахская

национально-освободительная поэзия затронута известными в зарубежной литературе авторами.

Подвергая научному анализу арцахскую национально-освободительную поэзию, мы обратились еще к одному существенному вопросу. Во всех произведениях первостепенной является не только идея существования Арцаха, его целостности, нераздробленности, но и всего армянского мира.

Арцахская освободительная поэзия имеет четкую политическую и гражданскую направленность, которая подчеркивает в характере арцахца его решительные убеждения, ориентацию, преданность родине. Эта проблема гораздо более глубока и обширна. Тематика освободительной борьбы не предполагает описания лишь военных действий и военного положения. Здесь литературно-художественный материал довольно объемный и включает в себя целую систему прошлого, настоящего и будущего армянского народа, проблему справедливости и национальной независимости.

Предметом исследования является арцахская поэзия, отражающая национально-освободительную борьбу. Цель и задачи работы - периодизация и систематизация арцахской поэзии, анализ ее идеологических и художественных особенностей, языкового мышления писателей, изобразительных средств и, вообще, особенностей поэтики в процессе развития армянской лирики.

Арцахская поэзия, отражающая национально-освободительную борьбу, не была тщательно изучена в армянском литературоведении. Были, конечно, отдельные статьи, в которых созданная в Арцахе литература рассматривалась во всеармянском литературном поле, в одной общей плоскости. Так, к арцахской освободительной поэзии в своих научных статьях обратились С. Саринян, С. Арзуманян, С. Капутикян, С. Ханзадян, С. Даниелян, А. Арутюнян, С. Ханян, С. Арутюнян, А. Никогосян, А. Аванесян и другие.

Новизна научной работы заключается в том, что впервые проводится всестороннее изучение национально-освободительной борьбы арцахской поэзии, делается попытка периодизировать и систематизировать материал, ставший предметом исследования, выявить характерные черты освободительной борьбы арцахской поэзии, показать ее весомую роль и значимость в армянской литературе.

Исследовательская работа основана на методе сравнения и сопоставления, аналитическом и историко-культурном методе.

Практическая ценность работы обусловлена ее идеологической, познавательной и воспитательной значимостью, злободневностью поставленных в ней задач, повышающих функциональную роль работы.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

Во введении представлены цели и задачи исследования, актуальность, научная новизна и степень разработанности материала.

Первая глава диссертации «Исторические черты освободительной борьбы арцахской поэзии» посвящена проблемам развития арцахской поэзии, отражающей национально-освободительное движение и борьбу за существование, ее идеологическим, художественным направлениям и

нововведениям, начиная с досоветского периода до наших дней. Здесь особое внимание уделяется как развитию литературы, так и сохранению национального духа, данные явления рассматриваются в одной целостности.

Во второй главе «Отечественный голос поэта и поэзии» подробнее рассматривается поэзия нового времени, возникшая на основе уже сформированного национального и традиционного, раскрываются характерные черты освободительной борьбы арцахской поэзии, тенденции ее развития, тщательно анализируются произведения известных писателей Г. Габриеляна, Г.Бегларяна, В. Акопяна, Ю. Саакяна, А. Арутюняна, М. Яхшунца, Н. Авакяна, Р.Есяна и других, художественные средства и черты, присущие личному характеру писателей.

В третьей главе диссертации «Уроки истории» рассматриваются жанровые особенности заветов и наставлений прошлого в освободительной борьбе арцахской поэзии. Здесь в основном анализируются крупные литературные произведения эпического жанра: поэмы, сказания, стихотворные повествования, дающие возможность тщательно раскрыть тематические предпочтения писателей, возможности создания образов, изобразительные средства выражения, вопросы, касающиеся поэтики. И, самое главное, научно исследуются те уроки истории, которые нашли своеобразное художественное отражение в крупных литературных произведениях эпического характера и отчетливо несут печать особенностей арцахской истории.

В заключении отдельными пунктами приводятся основные положения диссертации и основанные на них выводы.

Диссертационная работа завершается списком использованной литературы.

Amalya Vahan Grigoryan

THE REFLECTION OF THE NATIONAL LIBERATION
STRUGGLE IN ARTSAKH POETRY

Dissertation to obtain the degree of Doctor
of Philology in Speciality 10.01.02
“Modern Armenian Literature”

The defence will take place on the November 2015, at o'clock,
at the specialized Council 003 of “Armenian and Foreign Literature”
at the Institute of Literature of the National Academy of Science
after M.Abeghyan.
Address: 15 Grigor Lusavorich, Yerevan.

Summary

The thesis is devoted to revealing problems, ideological and aesthetic peculiarities of the national liberation struggle in Artsakh poetry.

The paper presents briefly the hard fate of Artsakh literary organization under the conditions of Azerbaijan despotism, the literary, philosophical, social and political views of writers, the important role of literature in the survival of the Armenian nation, an attempt was made to investigate both social, cultural, literary, historical and political, economic roots of the phenomenon in the context of the common time.

The relevance of the research “The Reflection of the National Liberation Struggle in Artsakh Poetry” lies in the fact that its scientific study makes possible the integration of the common picture of development of thematic, ideological and aesthetic tendencies in the Modern Armenian lyrics.

National problems raised in Artsakh poetry remain always topical for our people and their many-sided research, different aesthetic approaches and genre characteristics give an opportunity to conceive the phenomena in a new way and to be more correct in their evaluation.

It is necessary to mention that military theme is topical both in native and international reality. This is due to several factors: ruthless life-and-death struggle in extreme conditions, bright expression of human qualities, character traits, purposefulness, the course of hostilities. All this is reflected in literary works. It's more history in literature than in history itself.

It's well known that in the Soviet era the first national liberation struggle started in Artsakh. It immediately attracted international community's attention. In the thesis we have paid attention to the important fact that Artsakh national liberation poetry was touched upon by authors popular in foreign literature.

Having analyzed Artsakh national liberation poetry we touched upon the following substantive issue. The primary idea of all works is not only the existence and integrity of Artsakh, but the whole Armenian world as well.

Artsakh liberation poetry has a clear political and civic orientation which emphasizes strong convictions and devotion of Artsakh people. This problem is much deeper and wider. The theme of national liberation struggle does not involve just a description of hostilities and military situation. The literary material is quite voluminous and includes a whole system of the past, present and future of the Armenian nation, the problem of justice and national independence.

The subject of the research is Artsakh poetry that reflects national liberation struggle.

The aim of the work is periodization and systematization of Artsakh poetry, analysis of its ideological and aesthetic peculiarities, writers' linguistic thinking, means of expressions and, on the whole, the peculiarities of poetics in the process of development of the Armenian lyrics.

National liberation struggle in Artsakh poetry has not been studied thoroughly in the Armenian literary science. Of course, there were some articles in which the literature created in Artsakh was considered in the Pan-Armenian literary field, in a common plane. Thus, Artsakh liberation poetry was touched upon in the scientific articles of S. Sarinyan, S. Arzumanyan, S. Kaputikyan, S. Khanzadyan, S. Danielyan, A. Harutyunyan, S. Khanyan, S. Harutyunyan, A. Nikoghosyan, A. Avanesyan and others.

The novelty of the scientific research is provided by the comprehensive study of the national liberation struggle in Artsakh poetry for the first time; an attempt was made to periodize and systematize the material which has become the subject of the research, to reveal the distinctive features of the liberation struggle in Artsakh poetry, to show its special role and significance in the Armenian literature.

The research work is based on the methods of comparing and contrasting, analytical and cultural-historical methods.

The practical value of the work is conditioned by its ideological, informative and educational significance and the topicality of the raised issues that increase the functional role of the work.

The research paper consists of introduction, three chapters, conclusion and list of references.

The Introduction presents the goal of the research and its objectives, the topical issues, scientific novelty and the degree of elaboration of the material.

Chapter One "Historical Features of Liberation Struggle in Artsakh Poetry" is devoted to the problems of development of Artsakh poetry, which reflects the national liberation movement and the struggle for existence as well as ideological, aesthetic tendencies and innovations of the Artsakh poetry from the pre-Soviet period to the present. A special attention is paid both to the development of literature and preservation of the national spirit, these phenomena are considered in the same integrity.

Chapter Two "Native Voice of the Poet and Poetry" analyzes in detail the poetry of the new time which is based on the national and traditional poetry. Besides it deals with the distinctive features of the liberation struggle in Artsakh poetry and tendencies of its development. The works of famous writers

G.Gabrielyan, H. Beglaryan, V. Hakobyan, Y. Sahakyan, A. Harutyunyan, M.Yakhshunts, N. Avakyan, R. Yesayan and others, expressive means and features inherent to their nature are analyzed thoroughly.

Chapter Three "The Lessons of History" is devoted to the genre features of the covenants and precepts of the past in the liberation struggle of Artsakh poetry. Major literary works of epic nature are analyzed here: poems, legends, narrative poetry; it gives an opportunity to reveal writers' thematic preferences thoroughly, the ability to create images, means of expressions, issues relating to the poetics. And the most important thing is that those unique lessons of history are investigated thoroughly which exist in major literary epic works and bear clearly the stamp of the features of Artsakh history.

The results of the research are summed up in the conclusion.

The research paper is completed in a chart of bibliography, which comprises 109 scientific resources.